1890

Ա. ՊՈՒՇԿԻՆ

* * *

Եթե իրավ է, որ գիշերները,
Երբ որ հանգչում են մարդիկ ներքևում,
Երկնքից իջնում լուսնի շողերը,
Գերեզմանների վրրա դողդողում.

Եթե իրավ է, որ այն ժամերին
Դատարկվում են լուռ գերեզմանները,
Օ՜, ես կրկանչեմ իմ սիրելիին,
Կրկանչեմ նրա նրսեմ ըստվերը։

— Արի՜, հայտնվի՛ր, սիրելի պատկեր,
Ինչպես և էիր անջատման ժամին,
Սառն ու դալկադեմ, ինչպես ձմռան օր,
Խանգարած, խեղած տանջանքով վերջին։

— Ախ, արի՜, ինչպես աստղիկ հեռավոր,
Ինչպես թույլ հընչյուն թեթև զեփյուռի,
Կամ թեկուզ ինչպես տեսիլ ահավոր,
Ինձ համար մին է, արի՜, միայն արի՜...